

Գ Ր Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ԳՕԳՕԼ.—«Տարաս Բուլ՝բան» (Համառօտ փոխադրութիւն)։ Շուշի, տպարան Միրզաջան Ուստեսի-Յակոբեանցի, 1891 թ., փոքրապիւր երես, գինն է 5 կոպէկ։

Տարաս Բուլ՝բան Գոգոլի նշանաւոր գրածքներից մէկն է։ Այս հրաշալի պոէմայի մէջ հեղինակը գեղարեստօրէն գուրս է բերում Մալօրոսսիայի կեանքը մի որոշ պատմական շրջանում, այն է XVI դարում։ Այդ այն ժամանակն է, երբ Մալօրոսսիան գտնւում էր լեհական իշխանութեան տակ, երբ այս վերջինը սարսափելի ճնշումներով ու հալածանքներով աշխատում էր վերացնել լոնազաւանութիւնը։ Այնպէս էր, որ լոնազաւանութիւնը ու կապալով էին տրւում հրէաներին, ժողովուրդը սընքում էր ծանր հարկերի տակ։ Այս ծանր ժամանակներում մալօրոսսների իրաւունքների համար միակ պաշտպանը, նրանց կրած հալածանքների համար միակ վրէժխնդիրը՝ կաղակն էր, գլխաւորապէս կաղակների այն համայնքը, որը գտնւում էր սահմանի վրայ՝ ազատ ու անկախ մի որ և իցէ իշխանութիւնից։ Պոէմայի մէջ կաղակների ներկայացուցիչն է

դուրս բերւած Տարաս Բուլ՝բան, ուժեղ և համառ քնաւորութեան տէր մի մարդ։ «Նա իրան լոնազաւանութեան օրինաւոր պաշտպանն էր համարում։ Ինքնազուխ մտնում էր գիւղերը, ուր դանգատւում էին կապալաւորների ճնշումներից, հարկերի աւելցնելուց։ Ինքը իւր կաղակների հետ դատ էր կատարում ալդպիսիների վրա և իւր համար կանոն էր դրել, որ երեք գէսքում անպատճառ պէտք է դէնքի դիմել՝ այն է. երբ կառավարութեան դործակալները չէին լարդում տանտէրերին և կանգնում էին նրանց առաջ գդակները գլխին. երբ ծաղրում և անարգում էին ուղղափառութիւնը և չէին լարդում պապենական սովորութիւնները և վերջապէս, երբ թշնամին մահմադական էր, տաճիկ էր, որի գէմ աւանալն դէպքում նա թողատրելի էր համարում գէնք բարձրացնելու։ Այս սա մի ալդպիսի դաւանանք էր նորա համար, որ չը լանպեց իւր հարազատ

սիրելի որդուն, Անդրէլին, երբ աս լինուհու սիրուց դաւաճանեց կաղալ-
ներին և լուսադաւանութեանը, անց-
նելով լեհացիներու կողմը: Տարասը
իւր ձեռքով սպանեց նրան: Այսպիսի
մէկն էր Տարասը: Կան կաղակներու
և ուրիշ երկրորդական տիպեր, որոնք
լրացնում են ընդհանուր պատկերը:
Այսպիսի ուժեղ բնաւորութիւնների
հանդէպ կանգնած է մի թշուառ,
ճշւած էակ, դա Անդրէասի կիներն է:
«Եւ խնայեց նա ողորմելի էր, ինչ-
պէս և այլ կտրիճ դարու ամեն մի
կին: Եւ մի ակնթարթ միտն աս-
րեց սիրով, միայն կրքի, երիտասար-
դութեան առաջի վառ բուրբուն, և
ահա նորա խոտասիրտ դալթակղի-
ցուցիչը, թողնում է նրան սրի, ըն-
կերներու ու քէֆերի համար: Երբ
իւր ամուսնուն տեսնում էր տարաւ,
մէջ երկու, երեք օր և լիտոյ աւարի-
ների ընթացքում նրանից ալ ևս
լուր չէր ստանում և հէնց երբ նորա
տեսնում էլ էր, հետ նորա հետ աս-
լում էլ էր, ինչ կեանք էր նորա
կեանքը: Եւ վերաւոր էր կրում,
նոյն իսկ և ձեռք... նորա ամ-
բողջ սէրը, նորա բոլոր զգաց-
մունքները, ալն ամենը, ինչ քնքուշ
ու բորբոքայից է կնոջ մէջ, բոլորը
մալրական զգացմունքի վերափոխ-
ւեց»: Եւ ահա խոտասիրտ ամուսինը
նրան զրկում է և այդ միակ սիր-
վանքից: Նորա որդիքը նոր են վե-
րադարձել ճեմարանից և հեռեկալ
օրը հալըր նրանց արդէն տանում է
Սեչ, բանում է անվերադառնալի,
մէկին սպանում են լեհացիները,
միւսին ինքը հալըր:

Գողովի ալս դրամաճի համառօտ

փոխադրութիւնն է զլիսագրում չի-
ւա՞ր: Բացի համառօտ լինելուց այդ
փոխադրութիւնը և շատ անշնորհ
է: Գողովը «Տարաս Բուլբալի մէջ»
նկարագրել է մի ամբողջ ժողովրդի,
մի ամբողջ համայնքի կեանքը, իսկ
պ. փոխադրողը դուրս է ձգել ալն
ամենը, ինչ անմիջական բարաբերու-
թիւն չունի Տարասի և որդիերանց
հետ: Հեղինակը, օրինակ, կանգ է
առել ճեմարանի ներքին կեանքի
վրայ, որովհետև ճեմարանական
կեանքը նշանաւոր ազդեցութիւն ու-
նէր կաղակների, գինիս, հարուստ
դասակարգի վրայ, առաջ բերելով
նրանց մէջ մի ամուր, անընկճելի
բնաւորութիւն, ընկերասիրական ու
ձեռնարկող ոգի, որը արտապատում
է ապագայ կեանքում, իսկ պ. փո-
խադրողը անպէտք է համարել այդ
բոլորը և պատմում է միայն մի եր-
կու էպիզոդ Աստապի ու Անդրէլի
կեանքից: Հեղինակը կանգ է առել
Սէչի ներքին կեանքի վրայ, որը
արտապատում է այդ ժողովրդի ոգին,
բնաւորութիւնը, իսկ փոխադրողը
այդ բոլորը անպէտք է համարել և
հարկ չէ համարել նոյն իսկ իւր հե-
րոսներին Սէչ հասցնելու: Նա այդ
ամբողջ նկարագրութեան անդ միայն
ասել է «երեք օրից փոստ նոքա հա-
սան նշանակած տեղը, որը դառնում
է Սէչից մէկ ու կէս վերստ աւարա-
ծութեան վրայ»: պ. փոխադրողը չէ
դուրս բերել զապարոժիցուն և պա-
սերադմի դաշտում, սրտեղ աւելի
արտապատում է այդ աղսա ու ան-
ղուսպ ժող. վարդը և բաւականացել
է զլիսաւորապէս ալն տեղերով, ալն
էլ կցկաււր, ոլակը մասնակցում են

Տարասը, Աստապի կամ Անդրէլը և ալլն և ալլն, Պր. փոխադրողը ամենաանշան տեղ է տալիս և բնութեան հրաշալի նկարագրութիւններին, ուր բացակայում է ստեպի կլասիկական նկարագրութիւնը, որի պակասը անքան հրաշալի է, որ հեղինակի բերանից ականաւ զուրս է թռչում «*портъ востъ востъ, степи, какъ вы хороши!*», Լալց որն առում, Գոգոլի «Տարաս Բուլբա»-ի ամբողջ ³ և բացակայում է, և ալլպէս վարւել են մի հեղինակի հետ, որ լատին է իւր տմիտի գրեւորը:

Սկսող տեսէք թէ՛ կուրծքներ են պատահում փոխադրութեան մէջ, Ստալին է որ Սէշը գտնւում էր Դենկար գետի մէջ գտնուող փոքրիկ կղզիների վրայ, բալց տեսէք որ ըստ փոխադրողի Ուկրաինայից գալիս էին Սէշ ծովով (երես 17), (Գոգոլը առում է Դենկարով), լատին ընթերցողները զարմացմամբ տեսնում են, որ կոտորած գաղափարները, հրէաներին կոտորելու համար, Սէշից ուղղում են Նրանց տանել մի ահագին տարածութիւն ու լատին խնդրել Դանու գետում (երես 22), հեղինակի մօտ զապարոծները աւելի խնդր են, որովհետեւ գլխին, որ իրանց Դենկարն էլ կարող է հրէալ խնդրել, և առհասարակ փոխադրողի ֆանտազիան չատ ուժեղ է, նորա համար

զոլութիւն չունի տարածութիւնը, անկարծ տեսնում էք որ կազակները պիտի են ընկնում քրդերի ձեռքը (երես 23), ալլպէս է թարգմանել փոխադրողը հեղինակի *Ты-роетъ* խօսքը, Թարգմանական լեզուն վատ չէ բալց և ալլպէս աղատ էլ չէ օրինակ ալլպիսի խոսքը սխալներին՝

Не слушайъ счужу матери: она баба, она ничего не знаетъ. Մի լսիր, որդիս մօրդ, նա պառաւ է, նա ոչինչ չը գիտէ: փոխադրողն էլ չը գիտէ, որ баба անպատճառ պառաւ չէ նշանակում: Տարասը ալլտեղ ուղղում է առել՝ մի լսիր մօրդ, ինձ լսիր, և զորա համար չէր կարող առաջ բերել կիսով ձեռնութիւնը, որովհետեւ ինքը նրանից երկտասարդ չէ, ալլ ուղղում է առել՝ մի լսիր մօրդ, որովհետեւ նա կիսն է, Այս սխալը պատահում է մի քանի անգամ օր. երես 4 և 28:

И этакъ всѣмъ ходятъ въ акаѳи-ми? հարցնում է Տարասը, կամենալով առել՝ ալլպէս են հագնւում ձեռնարանականները, այ. փոխադրողը թարգմանում է. աղուց բոլորն էլ ալլպէս են դնում ձեռնարան: Այս փոխադրութիւնը երբեք չէ կարող փոխարինել խոսական «Տարաս Բուլբա»-ի ցանկալի է ալլ վերջինի լիակատար թարգմանութիւնը:

B.